Հայտարարություն

ՀՀ Տավուշի մարզի <<Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ –ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիությունը
2. բարձրագույն կրթությունը
3. ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
6. աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 23 –ից մինչև դեկտեմբերի 22- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09.00 – ից 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 26 –ին՝ ժամը 14. 00- ին, Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Դիլիջան, Կամո 131:

Տեղեկությունների համար զանգահարել (0268) 2-62-74 հեռախոսահամարով: